

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<----->> ----- 2013թ. N ----- Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԿԱԶՄԸ,  
ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ, ՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Գեոդեզիայի և քարտեզագրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հուլիսի 18-ի N 800-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 111-րդ կետի հանձնարարականի համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել <<Հայաստանի Հանրապետության տեղեկատվական ենթակառուցվածքի կազմը, ձևավորումը, վարումը և տեղեկատվության տրամադրման կարգը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

## ԿԱՐԳ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԿԱԶՄԸ, ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ, ՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

#### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կարգով կանոնակարգվում են տարածական տվյալների՝ Հայաստանի Հանրապետության տեղեկատվական ենթակառուցվածքի /այսուհետ՝ ՏՏԵ/ կազմը, ձևավորումը, վարումը և տեղեկատվության տրամադրման հիմնական սկզբունքները:

1.2. Սույն կարգը մշակվել է «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 7-րդ կետի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի 2012 թվականի հունիսի 11-ի «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2012 թվականի մարտի 21-ի ՀՕ-109-Ն օրենքի կիրարկումն ապահովող միջոցառման ցանկը հաստատելու մասին N° 504-Ա որոշման պահանջներին համապատասխան:

#### 2. ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կարգում օգտագործվել են հետևյալ տերմիններն ու հասկացությունները՝ տարածական օբյեկտ՝ ցանկացած կոնկրետ օբյեկտ, որը կարող է որոշվել առանձնահատուկ բովանդակությամբ և սահմաններով, և ներկայացվի թվային տվյալների բազայի տեսքով.

բազային տարածական տվյալներ՝ գաղտնիություն չպարունակող, բաց հրապարակման համար նախատեսված, ժամանակի մեջ կայուն տարածական դիրքով

առանձնացվող և այլ տարածական օբյեկտների համար կողմնորոշման հիմք հանդիսացող, առավել օգտագործվող տարածական օբյեկտների թվային տվյալներ.

Հայաստանի Հանրապետության տարածքի ՏՏԵ ռեգիոնալ օպերատորը /այսուհետ՝ Օպերատոր/ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի <<Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն>> ստորաբաժանումը, որը լիազորված է սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացնելու մատակարարի կողմից իրեն մատուցվող տարածական տվյալների ինտեգրման գործառույթները, ինչպես նաև սպառողներին ծառայություն մատուցել ժամանակակից երկրատեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ.

տարածական տվյալների մատակարարներ /այսուհետ՝ Մատակարարներ/ իրավահարաբերությունների սուբյեկտներ, որոնք Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան պարտավոր են և/կամ իրավասու են սահմանված կարգով, տրամադրել Օպերատորին իրավաբանորեն հիմնավորված տարածական տվյալներ.

տարածական տվյալների օգտագործողներ /սպառողներ/ ցանկացած իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք տարբեր նպատակներով օգտագործում են Օպերատորի կողմից տրամադրված տարածական տվյալներ, այդ թվում համացանցի մեջ ստեղծված գեոպորտալի միջոցով:

### **3. ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

3.1. ՏՏԵ ստեղծման և զարգացման նպատակն է ապահովել քաղաքացիների, կազմակերպությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ազատ մուտքը տարածական տվյալների ազգային պաշարներ և բարձրացնել մատակարարների և սպառողների լայն շրջանների կողմից տարածական տվյալների ստեղծման և օգտագործման արդյունավետությունը:

3.2. ՏՏԵ հիմնական խնդիրներն են՝

3.2.1. Հայաստանի Հանրապետության տարածքում միասնական կոորդինատային հիմքի պահպանման ապահովումն ու օգտագործումը, որը կատարվում է Հայաստանի Հանրապետության մշտական գործող ռեֆերենց կայանների ցանցի ստեղծման և

օգտագործման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքի բազային տարածական տվյալների ստեղծման և արդիականացման հաշվին:

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և իրավահարաբերությունների այլ սուբյեկտների կողմից նոր տարածական տվյալների ստեղծման համար կանոնակարգված կոորդինատային համակարգի և բազային տարածական տվյալների օգտագործման պարտադիր պայմանների ապահովումը:

3.2.2. Պետական և տարածաշրջանային (ռեգիոնալ) մակարդակներով վարչարարական որոշումներ ընդունելու և նրանց կատարման վերահսկողությունն ապահովելու նպատակով, կառավարման որակի և արդյունավետության բարձրացումը կատարվում է տարածական տվյալների տեղեկատվական ռեսուրսների լայն օգտագործման հաշվին:

3.2.3. Ճյուղային տարածական տվյալների ստեղծումը, վարումը և արդիականացումը, որոնք անհրաժեշտ են պետական կառավարման մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների ճյուղային (գերատեսչական) կառավարման խնդիրների լուծման համար:

3.2.4. Բազային տարածական տվյալների և սպառողների (օգտագործողների) անսահմանափակ շրջանների համար բաց հրապարակման ենթակա տարածական տվյալների մուտքի ապահովում՝ համացանցի մեջ ստեղծված գեոպորտալի միջոցով:

3.2.5. Տարածական տվյալների մատակարարների միասնական ստանդարտների և տարածական տվյալների ձևավորման կանոնների հիման վրա տարբեր տարածական տվյալների համատեղելիության և ինտեգրման ապահովում:

3.2.6. Բազային տարածական տվյալների վերաբերյալ արդիական և ճշգրիտ տեղեկատվության տրամադրում՝ միասնական կանոններով և սակագներով:

3.2.7. Տարածական տվյալների ստեղծման և նրա հետ կապված տեղեկատվական ծառայությունների համար ներդրումների աջակցություն:

3.2.8. Հայաստանի Հանրապետության տարածքում տարածական տվյալների որակի և ճշգրտության բարձրացում:

#### 4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՖՈՆԴԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

4.1. Հայաստանի Հանրապետության տարածական տվյալների ֆոնդը կազմված է բազային տարածական տվյալներից, ճյուղային տարածական տվյալներից, թեմատիկ տարածական տվյալներից, մետատվյալներից, դասակարգիչներից, տեղեկատուներից և գրանցման ցանկերից:

4.2. ՏՏԵ-ում ընդգրկված բոլոր բազային տարածական տվյալները պարտադիր են Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների համար երկրատեղեկատվական համակարգերում օգտագործման նպատակով:

1) Բազային տարածական տվյալների օբյեկտների ցանկի մեջ ներառվում են Հայաստանի Հանրապետության տարածքի հետևյալ տարածական օբյեկտները՝

ա. պետական գեոդեզիական ցանցի կետերը.

բ. վարչատարածքային բաժանման միավորները, այդ թվում Հայաստանի Հանրապետության, նրա մարզերի, համայնքների և բնակավայրերի սահմանները.

գ. կադաստրային միավորների օբյեկտները, որոնք հաշվառված են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի շտեմարանում.

դ. կապիտալ շինարարության (շենք, շինությունների) օբյեկտները հասցեավորման տեղեկատվությամբ, պետական, տարածքաշրջանային (ռեգիոնալ) և համայնքային նշանակության գծային կառույցներով (ավտոճանապարհային և երկաթուղային ցանց, խողովակաշարեր, էլեկտրացանցեր և այլն).

ե. ջրային և անտառային ֆոնդերի տարածական միավորներն ու օբյեկտները.

զ. ճանապարհային ցանցի օբյեկտները.

է. հատուկ պահպանվող բնական տարածքները.

ը. պատմամշակութային ժառանգության օբյեկտների տարածքները.

թ. քաղաքաշինական կարգավորման գծերը.

ժ. հատուկ պայմաններով օգտագործվող տարածքները.

ի. հասցեները.

իլ. ռելիեֆի թվային մոդելները.

իխ.աշխարհագրական օբյեկտների անվանումները:

Բազային տարածական տվյալների ցանկի մեջ կարող են լրացուցիչ ընդգրկվել այլ օբյեկտներ, որոնց գտնվելը այդ կարգավիճակում կհամարվի նպատակահարմար:

2) Բազային տարածական տվյալների կազմը և բովանդակությունը, բազային տարածական տվյալների դրանց նկարագրման պահանջները, այդ թվում յուրաքանչյուր տարածական օբյեկտի դիրքորոշման ճշգրտությունը, մշակում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն և սահմանված կարգով ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը:

3) Բազային տարածական տվյալների նկարագրման պահանջների մշակման ժամանակ կիրառվում է տարածական օբյեկտների կոորդինատային տվյալների հետ օգտագործման սկզբունքը, որն առավելագույնս ապահովում է տարածական օբյեկտների կոորդինատային տվյալների ճշգրտությունը, նկարագրման լիարժեքությունը, հավաստիությունը և նրա իրավական նշանակությունը:

4) Բազային տարածական տվյալների ձևավորման նպատակով Օպերատորի կողմից իրականացվում է գույքագրում, իսկ մատակարարի կողմից իրեն տրամադրված տարածական տվյալների ընտրություն և ինտեգրում:

5) Մատակարարների կողմից տարածական տվյալների փոխանցումը Օպերատորին իրականացվում է համացանցի միջոցով: Այդ հնարավորության բացակայության դեպքում փոխանցվում է բազային տարածական տվյալների փոփոխության պարբերությանը համապատասխան թվային տվյալների կրիչի միջոցով:

6) Սպառողների (օգտագործողների) մուտքը բազային տարածական տվյալներ ապահովվում է Օպերատորի կողմից Հայաստանի Հանրապետության գեոպորտալի միջոցով:

4.3. Ճյուղային տարածական տվյալներ՝ տվյալներ ճյուղային (գերատեսչական) կառավարման տարածական օբյեկտների վերաբերյալ, որոնք անհրաժեշտ են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման համար:

Ճյուղային տարածական տվյալների կազմը, տարածական տվյալների նկարագրման պահանջները, մարմիններն ու կազմակերպությունները, որոնք պատասխանատու են

ճյուղային տարածական տվյալների առանձին կատեգորիաների վարման և հասանելիության տրամադրման համար, որոշվում են ճյուղային նորմատիվ իրավական ակտերով, ՏՏԵ տարածական օբյեկտների նկարագրման ընդհանուր պահանջներին համապատասխան:

Ճյուղային տարածական տվյալները պարտադիր են ներգերատեսչական օգտագործման համար:

Ճյուղային տարածական տվյալների ստեղծման ժամանակ պարտադիր պետք է օգտագործվեն բազային տարածական տվյալները:

Ճյուղային տարածական տվյալների ստեղծման, վարման և հասանելիության կազմակերպումը հնարավոր է իրականացնել համապատասխան պայմանագրերի հիման վրա, ՏՏԵ ծառայությունների մատուցման միջոցով պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:

4.4. Թեմատիկ տարածական տվյալներ՝ տարածական տվյալներ, որոնք ստեղծվում են ցանկացած տնտեսական, գիտական, ուսումնական և այլ գործունեության սուբյեկտների կողմից, իրենց առջև դրված նպատակների իրականացման համար:

Թեմատիկ տարածական տվյալների ստեղծման, արդիականացման, պահպանման և նրանց հասանելիության կանոնակարգումն իրականացվում է թեմատիկ գործունեության շրջանակներում (ուսումնական, արտադրական, գիտական և այլն) գործող օրենսդրությանը, նորմատիվ փաստաթղթերի և ՏՏԵ տարածական օբյեկտների նկարագրման ընդհանուր պահանջներին համապատասխան:

Թեմատիկ տարածական տվյալների ստեղծումը, վարումը և հասանելիության կազմակերպումը հնարավոր է իրականացնել շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձանց համապատասխան պայմանագրերի հիման վրա ՏՏԵ ծառայությունների մատուցման սկզբունքներով:

Ցանկացած թեմատիկ տարածական տվյալներ, որպես մետատվյալներ, գրանցումից (որտեղ պետք է գրանցվի) հետո, կարող են ընդգրկվել ՏՏԵ կազմի մեջ տարածական տվյալների պահանջներին համապատասխան:

4.5. Հայաստանի Հանրապետության բազային, ճյուղային և թեմատիկ տարածական տվյալների բոլոր ժողովածուները պետք է ունենան համապատասխան մետատվյալներ:

4.6. Տեղեկատու տվյալներ՝ դասակարգիչներ, տեղեկատուներ, գրանցամատյաններ, ստանդարտների և այլ փաստաթղթերի շտեմարաններ, որոնք անհրաժեշտ են տարածական տվյալների կառուցման համար: Տեղեկատու տվյալների ցանկը որոշում է Հայաստանի

Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն:

## **5. ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

5.1. ՏՏԵ կազմակերպչական կառուցվածքի մեջ մտնում են Հայաստանի Հանրապետության ՏՏԵ մոդելի ստեղծման Համակարգող խորհուրդը՝ միջգերատեսչական աշխատանքային խումբը, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն, տարածական տվյալների մատակարարները, տարածական տվյալների սպառողները (օգտագործողները):

5.2. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումով ստեղծված Համակարգող խորհուրդը՝ միջգերատեսչական աշխատանքային խումբը, մասնակցում է ՏՏԵ ստեղծման և զարգացման համար Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության մարմինների գործողությունների համակարգմանը:

5.3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն ՏՏԵ-ի ստեղծման և զարգացման շրջանակներում իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) մշակվում և ներկայացնում է ՀՀ կառավարություն օրենքների, հրամանագրերի և որոշումների նախագծեր, ինչպես նաև առաջարկություններ ոլորտի իրավական և նորմատիվ-տեխնիկական կարգավորման վերաբերյալ.

մասնակցում է ՏՏԵ ստեղծման և զարգացման շրջանակներում պետական իշխանության մարմինների հետ համագործակցության համաձայնագրերի մշակմանը.

մասնակցում է պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից բազային, ճյուղային, թեմատիկ տարածական տվյալների և մետատվյալների կազմի մշակմանը, ստեղծմանը, արդիականացմանը, տրամադրմանը և օգտագործմանը.

նախապատրաստում և ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարություն ՏՏԵ ստեղծման և զարգացման աշխատանքների ֆինանսավորման վերաբերյալ առաջարկություններ.



մշակում և ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարություն հաստատման Օպերատորի մասին որոշման նախագիծը.

ղեկավարում է Օպերատորի գործունեությունը:

5.4. ՏՏԵ նորմատիվ իրավական և տեխնոլոգիական ապահովման հիման վրա տարածական տվյալների ինտեգրացման և սպառողներին ծառայություններ մատուցելու նպատակով ստեղծված Օպերատորը իրականացնում է հետևյալ գործառույթները՝

բազային տարածական տվյալների շարքին դասելու նպատակով, կատարում է տարածական տվյալների աղբյուրների գույքագրում.

կատարում է տարածական տվյալների մատակարարի կողմից իրեն տրամադրվող տարածական տվյալների որակի գնահատում.

պահպանում է արդիականությունը և ծառայություններ է մատուցում Հայաստանի Հանրապետության տարածական տվյալների ազատ մուտքը սպառողների համար.

ծառայություններ է մատուցում լիազորված մարմիններին և կազմակերպություններին բազային, ճյուղային և թեմատիկ տարածական տվյալների և նրանց մետատվյալների վարման համար.

ծառայություններ է մատուցում անհրաժեշտ տվյալների որոնման համար.

վարում է տեղեկատուներ, դասակարգիչներ և ՏՏԵ գրանցամատյաններ, որոնք ապահովում են մասնակիցների, տարածական տվյալների, մետատվյալների և ՏՏԵ ծառայությունների ճանաչումն ու կարգավիճակը:

## **6. ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ**

6.1. ՏՏԵ տեխնոլոգիական ապահովման կազմի մեջ մտնում են՝

Հայաստանի Հանրապետության հեռահաղորդակցման Պետական ինտեգրված համակարգը՝ ՏՏԵ մասնակիցների միջև միասնական տեղեկատվա-հաղորդակցումն ապահովող հեռահաղորդակցուղիների ցանցը,

Հայաստանի Հանրապետության ռեֆերենց կայանների ցանցը՝ բարձր ճշգրտության արբանյակային դիրքորոշման համակարգը, որն ուղղված է Պետական գեոդեզիական ցանցի ռեգիոնալ հատվածի օգտագործման արդյունավետության բարձրացմանը,

Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միասնական երկրատեղեկատվական համակարգը, որն ապահովում է տարածական տվյալների ստեղծումը, արդիականացումը, պահպանումը, մատչելիությունը և որակի վերահսկումը,

Տվյալների մշակման կենտրոն, որն ապահովում է տարածական տվյալների, մետատվյալների և ՏՏԵ տեղեկատվական տվյալների կանոնակարգված պահպանումն ու տրամադրումը,

Հայաստանի Հանրապետության գեոպորտալը՝ պաշտոնական ինտերնետ-ռեսուրս, որն ապահովում է մուտք բաց հրատարակման համար նախատեսված տարածական տվյալներ ստացում, և բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձանց ՏՏԵ զանազան ծառայությունների տրամադրում,

Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության միասնական միջգերատեսչական համակարգ,

ՏՏԵ Մասնակիցների երկրատեղեկատվական համակարգեր, գեոպորտալներ և տվյալների բազաներ:

## **7. ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ**

7.1 Տարածական տվյալների տրամադրումը կարող է կատարվել և գրավոր և բանավոր տեսքով: Տեղեկատվության տրամադրման ձևը որոշվում է սույն Կարգով, ինչպես նաև տեղեկատվության տրամադրման հայտով:

7.2 Տեղեկատվության տրամադրման հայտն իր մեջ պետք է պարունակի փոստային հասցեն, հեռախոսահամարը կամ ֆաքսի համարը, կամ էլեկտրոնային հասցեն, քաղաքացու անուն ազգանունը կամ կազմակերպության անվանումը: Անանուն հայտերը չեն դիտվում:

7.3 Տեղեկատվությունը տրամադրվում է պատասխանի տեսքով, որի մեջ ընդգրկված են, կամ որին կցված է պահանջվող տեղեկատվությունը, կամ հիմնավորված մերժումը:

7.4 Եթե տեղեկատվությունը պարունակում է պետական գաղտնիք, պատասխանի մեջ պետք է նշվի այդ տեղեկատվությունը որպես պետական գաղտնիք ճանաչելու նորմատիվ իրավական ակտի անվանումը:

## **8.ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ**

ՏՏԵ նորմատիվ իրավական ապահովման հիմքերն են՝

- նորմատիվ-իրավական փաստաթղթերը, որոնցով որոշվում են բազային տարածական տվյալների ստեղծման և ազատ տրամադրման ձևաչափի և նոր տարածական տվյալների ստեղծման ժամանակ բազային տարածական տվյալների պարտադիր օգտագործման մարմինների գործառույթները.

- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի, ՀՀ պետական կառավարման մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների, ՏՏԵ շրջանակներում տարածական տվյալներ փոխադարձ ազատ մուտք գործելու տրամադրման և ապահովման տարածական տվյալների մատակարարների և օգտագործողների միջև համաձայնագրերը, ինչպես նաև նոր տարածական տվյալների ստեղծման համար բազային տարածական տվյալների պարտադիր օգտագործումը.

- ճյուղային տարածական տվյալների կազմը որոշող ՀՀ պետական կառավարման մարմինների նորմատիվ իրավական ակտերը, պահանջները դրանց և դրանց մետատվյալների նկատմամբ, կազմակերպություններ, որոնք պատասխանատու են ճյուղային տարածական տվյալների և մետատվյալների ստեղծման, վարման և առանձին կատեգորիաների տրամադրման համար.

ՀՀ տարածական տվյալների և դրանց մետատվյալների պահանջների համակարգը որոշող ՀՀ նորմատիվ իրավական փաստաթղթերը, որոնք ընդգրկում են գործող ստանդարտներին համապատասխան ՀՀ գեոպորտալի կազմի, դասակարգման, նկարագրման կարգի և պահպանման պահանջները.

ՀՀ տարածական տվյալների ֆոնդի ձևավորման կարգը հաստատող ՀՀ նորմատիվ իրավական փաստաթղթերը, ՀՀ պետական կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և ՀՀ Գեոպորտալի միասնական երկրատեղեկատվական համակարգի գործունեության ժամանակացույցը:

**9.ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՍՏԵՂԾՄԱՆ, ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ**

9.1. ՏՏԵ ստեղծման և զարգացման ծախսերի ֆինանսավորումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեյի միջոցների հաշվին:

9.2. Պետական, ռեզիդնալ և տեղական մակարդակի տարածական տվյալների ստեղծման և արդիականացման ծախսերի ֆինանսավորումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեյի միջոցների հաշվին:

**Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԿԱԶՄԸ,  
ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ, ՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ**

**1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը**

<<Գեոդեզիայի և քարտեզագրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի փոփոխությամբ (21.03.2012թ. ՀՕ-109-Ն) որպես նոր հասկացություն լրացվեց տարածական տվյալներ և տարածական մետատվյալներ հասկացությունները, որոնք պարունակում են օբյեկտների վերաբերյալ տարածական տեղեկություններ, որոնք ընդգրկում են տեղեկություններ դրանց տեղադիրքի, ձևի և հատկությունների մասին, իսկ տարածական մետատվյալները, դա տվյալների հավաքածու է, որով նկարագրվում է տարածական տվյալների բնութագրերը:

Հայաստանի Հանրապետությունում դեռևս կանոնակարգված չեն տարածական տվյալների ենթակառուցվածքի կազմը, ձևավորումը, վարումը և տեղեկատվության տրամադրման մեխանիզմները: Բացի այդ որոշման ընդունման անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության մասշտաբային շարքի տեղագրական քարտեզների անընդհատ արդիական պահելու պահանջով:

## **2. Առաջարկվող կարգավորման բնույթը**

Որոշման ընդունման և իրականացման նպատակն է առավել արդյունավետ կազմակերպել տարածական տվյալների ենթակառուցվածքի կազմի, ձևավորման, վարման և տեղեկատվության տրամադրման գործընթացը: Սրանով կանոնակարգվում են Հայաստանի Հանրապետության տարածքի տարածական տվյալների նպատակները, խնդիրները, կառուցվածքը, տարածական տվյալների ենթակառուցվածքի գործունեության և զարգացման հիմնական սկզբունքները:

## **3. Ակնկալվող արդյունքը**

Իրավական ակտի կիրառման արդյունքում մենք կունենանք տարածական տվյալների ենթակառուցվածքի կազմի ձևավորման և վարման, ինչպես նաև տարածական տվյալների տրամադրման կանոնակարգված մեխանիզմը, որն անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության միասնական երկրատեղեկատվական համակարգ ստեղծելու համար: